

Արձանագրություն №3 (287)

ԵՊՀ-ի ռուս բանասիրության ֆակուլտետի գիտական խորհրդի 2016 թ.-ի հունվարի 27-ի նիստի

Գիտխորհրդի նիստը վարում էր ֆակուլտետի դեկան դոցենտ Պ.Բալայանը: Նա տեղեկացրեց, որ ֆակուլտետի գիտխորհրդի նիստին ներկա են 28 անդամներից 21-ը: Ապահովված է անհրաժեշտ քվորումը: Բաց քվեարկությամբ միաձայն հաստատվեց գիտխորհրդի նիստի օրակարգը:

Օրակարգ.

1. ԵՊՀ անվանական կրթաթոշակների վերահաստատում:
2. ԵՊՀ -ի 100-ամյա հոբելյանին նվիրված մրջոցառումների մասին:
3. Ռուս բանասիրության ֆակուլտետի զարգացման ռազմավարական ծրագրի մասին:
4. Ընթացիկ հարցեր:

1. **Ֆակուլտետի դեկան դոցենտ Պ.Բալայանը** նշեց այն ուսանողներին, ովքեր 1-ին կիսամյակում ներկայացված էին անվանական կրթաթոշակների: Նրանք շարունակում են բարձր առաջադիմություն ցուցաբերել, ուստի առաջարկվում է վերահաստատել

1. 3-րդ կուրսի ուսանող՝ Բարսեղյան Անիկ Ավետիքի - Վ.Բրյուսովի անվան կրթաթոշակ:
2. 3-րդ կուրսի ուսանող՝ Մկրտչյան Սերինե Վարդանի – Վ.Քոչարյանի անվան կրթաթոշակ:

2. **Ֆակուլտետի դեկան դոցենտ Պ.Բալայանը** 2019 թ. ԵՊՀ-ն տոնելու է ստեղծման 100-ամյակը՝ Այդ կարևոր իրադարձությանը պետք է պատրաստվել: Դիմում են ամբիոնների վարիչներին կազմակերպել քննարկումներ և առաջարկներ ներկայացնել:

3. Ֆակուլտետի դեկան դոցենտ Պ.Բալայանը ներկայացրեց ֆակուլտետի զարգացման ռազմավարական ծրագրի դրույթները.

- Լեզուների կենտրոնի ստեղծումը կարող է որոշակի ձևով անդրադառնալ մեր ժամաքանակին: Առաջարկում ենք թողնել ռուսերենը ուսումնական ժամերի տիրույթում և փորձել սկսել այլ առարկաներից, օրինակ ֆիզկուլտուրայից:
- առաջարկում ենք մնացորդային գիտելիքների ստուգման /2-3 կուրսի/ մեխանիզմի կիրառումը
- Զարգացնել **ՄՄՀ** և **թարգմանչություն** ծրագիրը մագիստրատուրայում
- քննական հարցերի էլեկտրոնային բանկի ստեղծումը, որը կներառի քննական հարցաշարից 3 անգամ ավել հարցեր, որոնցից ընտրություն կկատարվի
- կատարել սերտիֆիկացում /Ա1, Ա2, Բ1/
- մշտապես գործող գիտական սեմինար երիտասարդ դասախոսների համար:

4. Ֆակուլտետի դեկան դոցենտ Պ.Բալայանը տեղեկացրեց երիտասարդ բանաստրի դպրոցի անդրանիկ հանդիպման մասին, որին ներկա էին շուրջ 60 մասնակից: Այս փաստը մեծ հույսեր է ներշնչում:

Գիտական խորհրդի նախագահ՝

Պ.Բ. ԲԱԼԱՅԱՆ

Գիտական խորհրդի քարտուղար՝

Մ.Ռ. ԴՊԻՐՅԱՆ